ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի թիվ 16/11-21.06.2024թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 27.06.2024թ.

Խորհրդի նախագահ

---------- Ս. Սուքիասյան

ԿԱՐԳ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2024

R/K/0/105/21.06.2024/12

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ			
Հ/Հ	Որոշման/Հրամանի ամսաթիվ	Որոշման/Հրամանի համար	Փաստաթղթի նույնականացուցիչը
1	22.09.2014թ.	34/02-22.09.2014թ.	R/K/0/105/22.09.2014/1
2	28.08.2015թ.	27/14-28.08.2015թ.	R/K/0/105/28.08.2015/2
3	30.08.2016թ.	40/13-30.08.2016թ.	R/K/0/105/30.08.2016/3
4	30.06.2017թ.	33/04-30.06.2017թ.	R/K/0/105/30.06.2017/4
5	17.07.2017թ.	37/10-17.07.2017թ.	R/K/0/105/17.07.2017/5
6	19.07.2018թ.	28/10-19.07.2018թ.	R/K/0/105/19.07.2018/6
7	19.07.2019թ.	28/03-19.07.2019թ.	R/K/0/105/19.07.2019/7
8	30.07.2020թ.	30/03-30.07.2020թ.	R/K/0/105/30.07.2020/8
9	28.07.2021թ.	26/02-28.07.2021թ.	R/K/0/105/28.07.2021/9
10	28.07.2022թ.	23/06-28.07.2022թ.	R/K/0/105/28.07.2022/10
11	21.07.2023թ.	22/06-21.07.2023թ.	R/K/0/105/21.07.2023/11
12	21.06.2024թ.	16/11-21.06.2024թ.	R/K/0/105/21.06.2024/12

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույնով սահմանվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը (այսուհետ՝ Կարգ):

1.2 Սույն Կարգը մշակված է համաձայն ՀՀ գործող օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների:

1.3 Սույն կարգի իմաստով.

1.3.1 ***անձը հաստատող փաստաթուղթ՝***

1.3.1.1 ՀՀ քաղաքացիների համար անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, վերադարձի վկայական՝ միայն ՀՀ վերադառնալու համար, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր, ծննդյան վկայական,

1.3.1.2 ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական, փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

1.3.1.3 օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,

1.3.1.4 քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական, ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,

1.3.1.5 ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

1.3.2 ***Հաշվետեր բաժնետեր***՝ Բանկում և այլ բանկերում հաշիվ (այդ թվում քարտային) ունեցող բաժնետեր, որը Բանկ է ներկայացրել շահութաբաժինները հաշվին հաշվեգրելու միջոցով ստանալու պարբերական դիմում-հանձնարարական՝ ուղղված Հաճախորդների սպասարկման կենտրոնական գրասենյակի (այսուհետ՝ ՀՍԿԳ) պետին/մասնաճյուղի կառավարչին:

1.3.3 ***Ոչ հաշվետեր բաժնետեր***՝ սույն կարգի 1.3.2 կետում չնշված մնացած բաժնետերերը:

1.4 Բանկը տարեկան շահութաբաժիններ է վճարում Բանկի գործունեության տարեկան արդյունքներով, ընդ որում.

1.4.1 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին կարող են վճարվել եռամսյակային վճարներ (շահութաբաժիններ):

1.5 Տարեկան շահութաբաժինների վճարման չափը, կարգը և ժամկետները սահմանվում են տարեկան ժողովի որոշմամբ՝ Բանկի Խորհրդի ներկայացմամբ:

1.6 Տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեն տվյալ տարվա տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցների ցուցակում ընդգրկված Բանկի բաժնետերերը՝ Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից (համաձայն հաշվառման):

1.7 Տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցողների ընդհանուր ցուցակը հաստատվում է Խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի կայացման օրը հրավիրված նիստի ընթացքում:

1.8 Բանկի Խորհրդի հաստատած ընդհանուր ցուցակի ներքո «STOCKS» ծրագրից (այսուհետ՝ ռեեստրի ծրագիր) կազմված ցուցակները (ըստ մասնաճյուղերի և գլխավոր գրասենյակի) տրամադրվում են համաձայն սույն Կարգի:

1.9 Տարեկան շահութաբաժինները վճարվում են Բանկի զուտ (կուտակված) շահույթից:

1.10 Բանկի շահութաբաժինների հաշվարկման, անհրաժեշտ ցուցակների կազմման, մասնաճյուղեր և ՀՍԿԳ տրամադրման գործընթացը ապահովվում է Բանկի ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման՝ ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնի կողմից, Բանկի ռեեստրի ծրագրի միջոցով:

1.11 ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնի աշխատակցի կողմից, մինչև ռեեստրի ծրագրի տվյալների հիման վրա Բանկի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակի կազմումը, ստուգվում է ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթվի դրությամբ ռեեստրի ծրագրի տվյալների համապատասխանությունը Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի ծրագրային ապահովում՝ «DEPEND» համակարգից արտահանված ռեեստրի տվյալներին՝ անհրաժեշտության դեպքում ռեեստրի ծրագրում կատարելով համապատասխան ճշգրտումներ:

1.12 Շահութաբաժինները վճարվում են անկանխիկ եղանակով՝ շահութաբաժնի գումարը փոխանցելով բաժնետիրոջ (լիազորված անձի, ժառանգորդի, իրավահաջորդի) բանկային (քարտային) հաշվին՝ բաժնետիրոջ (լիազորված անձի, ժառանգորդի, իրավահաջորդի) կողմից ներկայացված պարբերական դիմում-հանձնարարականի հիման վրա:

1.13 ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնի աշխատակիցը ռեեստրի ծրագիր է մուտքագրում սույն կարգի 3.11 կետի համաձայն ստացված բաժնետերերի համապատասխան հաշվի համարները:

2. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Բաժնետերերի ռեեստրի ծրագրից, Խորհրդի հաստատած ընդհանուր ցուցակի ներքո կազմվում են տարեկան շահութաբաժինների վճարման հետևյալ ցուցակները.

2.1.1 Տարեկան ժողովի կայացման օրը՝

2.1.1.1 ամփոփ և դասակարգված ըստ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բաժնետերերի, որտեղ մեկ թվով նշվում է հաշվարկված շահութաբաժնի չափը և բաժնետոմսերի քանակը:

2.1.2 Տարեկան ժողովի ավարտից տաս աշխատանքային օրյա ժամկետում՝

2.1.2.1 ըստ մասնաճյուղերի (գլխավոր գրասենյակում՝ ՀՍԿԳ-ի) ամփոփ և դասակարգված սույն կարգի 1.3.2-1.3.3 կետերի համաձայն՝ հաշվետեր և ոչ հաշվետեր բաժնետերերի կտրվածքով, որտեղ մեկ թվով նշվում է հաշվարկված շահութաբաժնի չափը և բաժնետոմսերի քանակը:

2.1.2.2 ըստ մասնաճյուղերի (գլխավոր գրասենյակում՝ ՀՍԿԳ-ի) կտրվածքով, դասակարգված սույն կարգի 1.3.2-1.3.3 կետերի համաձայն՝ ըստ հաշվետեր՝ առանձնացված ըստ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բաժնետերերի, և ոչ հաշվետեր բաժնետերերի, որտեղ նշվում է

2.1.2.2.1 հաշվետեր բաժնետերերի ցուցակների դեպքում՝ բաժնետիրոջ անվանումը, հասցեն, անձը հաստատող փաստաթղթի/պետ. ռեգիստրի վկայականի տվյալները, հաշվի համարը, որին հաշվեգրվելու է շահութաբաժնի գումարը, բաժնետոմսերի քանակը, շահութաբաժնի չափը:

2.1.2.2.2 ոչ հաշվետեր բաժնետերերի ցուցակների դեպքում՝ բաժնետիրոջ անվանումը, ռեզիդենտությունը, հասցեն, անձը հաստատող փաստաթղթի/պետ. ռեգիստրի վկայականի տվյալները, բաժնետոմսերի քանակը, շահութաբաժնի չափը, եկամտային հարկի չափը, վճարման ենթակա շահութաբաժնի չափը, շահութաբաժնի վճարման ամսաթիվը:

2.2 Սույն Կարգի 2.1.1.1 կետում նշված ցուցակի էլեկտրոնային տարբերակը («.pdf» ֆորմատով) տարեկան ժողովի կայացման օրը, իսկ սույն կարգի 2.1.2.1 կետում նշված ցուցակի էլեկտրոնային տարբերակը («.pdf» ֆորմատով)՝ տարեկան ժողովի ավարտից տաս աշխատանքային օրյա ժամկետում, ՀՍԿԳ-ի կոմից «WorkFlow» ծրագրով ուղարկվում է Բանկի Գլխավոր հաշվապահին՝ հարկային հաշվառում իրականացնելու և անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումների համար, որից հետո.

2.2.1 սույն Կարգի 2.1.2.2.1 կետում նշված հաշվետեր բաժնետերերի ցուցակները Բանկի ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնի կողմից «.xlsx» ֆորմատով էլեկտրոնային եղանակով «WorkFlow» ծրագրով ուղարկվում են ՀՍԿԳ Հաճախորդների սպասարկման բաժնին:

2.2.2 սույն Կարգի 2.1.2.2.2 կետում նշված ոչ հաշվետեր բաժնետերերի ցուցակները Բանկի ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնի կողմից «.pdf» ֆորմատով էլեկտրոնային եղանակով «WorkFlow» ծրագրով ուղարկվում են Բանկի ՀՍԿԳ Հաճախորդների սպասարկման բաժնին և մասնաճյուղերին:

3. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն Կարգի 2.1.2.2 կետի հաստատված ցուցակների հիման վրա, տարեկան ժողովի կողմից հաստատված շահութաբաժնի վճարմանը նախորդող աշխատանքային օրվա դրությամբ, Հաշվապահությունը, Բանկի զուտ շահույթից շահութաբաժինների գումարը մեկ թվով փոխանցում է «Վճարման ենթակա շահութաբաժիններ» հաշվին ըստ մասնաճյուղերի (ՀՍԿԳ-ի դեպքում՝ առանձին ըստ հաշվետեր և ոչ հաշվետեր բաժնետերերի):

3.2 Մասնաճյուղերը/գլխավոր գրասենյակում՝ ՀՍԿԳ-ն/ տարեկան ժողովի կողմից հաստատված շահութաբաժնի վճարման օրվանից իրականացնում են շահութաբաժինների վճարումը /ըստ սույն Կարգի 2.2.2 կետի/ ստացված ցուցակների:

3.3 ՀՍԿԳ Հաճախորդների սպասարկման բաժնի աշխատակիցը տարեկան ժողովի կողմից հաստատված շահութաբաժնի վճարման օրը սույն Կարգի 2.2.1 կետի համաձայն ստացված ցուցակների և սույն կարգի 1.5 կետով սահմանված որոշման հիման վրա, հաշվեգրում (փոխանցում) է Բանկի հաշվետեր բաժնետերերի շահութաբաժինները վերջիններիս՝ ցուցակում նշված հաշիվներին:

3.4 Ոչ հաշվետեր բաժնետերը շահութաբաժինները ստանալու համար, ներկայանում է Բանկ և.

3.4.1 Բանկում գործող կարգի համաձայն նրա համար բացվում է բանկային (քարտային) հաշիվ (Բանկում գործող հաշիվ չունենալու դեպքում), և բաժնետերը ստորագրում է շահութաբաժնի գումարը տվյալ հաշվին կամ բանկում գործող այլ հաշվին փոխանցելու պարբերական դիմում-հանձնարարական կամ

3.4.2 բաժնետիրոջ ցանկությամբ շահութաբաժինների վճարման համար վերջինս պարբերական դիմում-հանձնարարականի միջոցով տրամադրում է այլ բանկում գործող հաշվեհամար՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

3.4.2.1 ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ,

3.4.2.1.1 իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը (տվյալ փաստաթղթերը կարող են չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով)

3.5 Ոչ ռեզիդենտ (ոչ հաշվետեր հանդիսացող) բաժնետերերը տնօրինում են իրենց շահութաբաժինը համապատասխան գրավոր տրված պարբերական դիմում-հանձնարարականով:

3.6 Ֆիզիկական անձի անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել նաև լիազորված անձին օրենքով սահմանված նոտարի վավերացմամբ տրված լիազորագրով կամ ժառանգորդին՝ ժառանգումը հիմնավորող փաստաթղթերով (նոտարական, կտակով և այլն):

3.7 Իրավահաջորդության դեպքում ներկայացվում են օրենքով պահանջվող բոլոր հիմնավորող փաստաթղթերը:

3.8 Մինչև տասնչորս տարեկան անչափահասի անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել անչափահասի օրինական ներկայացուցիչներին՝ ծնողներին, որդեգրողներին կամ խնամակալին՝ նրանց անձը հաստատող փաստաթղթով: Այն դեպքում, երբ մինչև տասնչորս տարեկան անչափահասի բաժնետոմսերի

շահութաբաժինները ցանկանում է ստանալ ծնողներից որևէ մեկը, ապա վերջինս պետք է ներկայացնի նաև մյուս ծնողի կողմից իրեն տրված գրավոր լիազորագիրը (նոտարի հաստատումով կամ Բանկում՝ լիազորագրերի տրման համար սահմանված կարգով տրված):

3.9 Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ անչափահասին՝ նրա անձը հաստատող փաստաթղթով (մինչև տասնվեց տարեկանի համար ծննդյան վկայական և անձնագիր կամ նույնականացման քարտ, իսկ տասնվեց տարեկանը լրացած անչափահասի համար անձնագիր կամ նույնականացման քարտ), անձը հաստատող փաստաթուղթ չունենալու դեպքում՝ նույնականացումը պետք է կատարվի ծնողներից մեկի հավաստող ստորագրությամբ: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի բաժնետոմսերի շահութաբաժինները միանձնյա ստացող ծնողը պետք է ներկայացնի այդ անչափահասի կողմից ծնողներից երկուսի համաձայնությամբ տրված լիազորագիրը (նոտարի հաստատումով կամ Բանկում՝ լիազորագրերի տրման համար սահմանված կարգով տրված):

3.10 Բաժնետերերը կարող են դիմում-հանձնարարականի միջոցով փոխել շահութաբաժնի ստացման հաշվեհամարը:

3.11 Մասնաճյուղերի և ՀՍԿԳ-ի Հաճախորդների սպասարկման բաժնի կողմից հաշվետու ամսում նոր և գործող բաժնետերերի համար սույն կարգի համաձայն բացված հաշվի համարները, սույն կարգի 3.4 կետի համաձայն բաժնետերերի կողմից տրված գործող հաշվի համարները, սույն կարգի 3.10 կետի համաձայն բաժնետերերի կողմից փոփոխված հաշվի համարները մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը «WorkFlow» ծրագրով ներկայացվում են ՀՍԿԳ Դեպոզիտար ծառայությունների բաժնին՝ կցելով բաժնետերերի կողմից տրված շահութաբաժինները հաշվին փոխանցելու վերաբերյալ պարբերական դիմում-հանձնարարականների սկան արված տարբերակները:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Շահութաբաժինների չվճարված գումարները պահպանվում են մասնաճյուղերի (ՀՍԿԳ-ի) «Վճարման ենթակա շահութաբաժիններ» հաշիվներում, մինչև բաժնետիրոջ ներկայանալը:

4.2. Շահութաբաժինների ցուցակները, կից հիմնավորող փաստաթղթերով պահպանվում են մասնաճյուղում (ՀՍԿԳ-ում):